



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ՆԻԶԱՄԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

« 03 » դեկտեմբեր 2014 թ.

գ. Նիզամի
☒ Հեռ.(0236) 4-34-42

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

N 15

ՆԻԶԱՄԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2015թ_Ի ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ և
ՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ.

Ղեկավարվելով «Տեղական տուրքեր և վճարների մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 8, 10 հոդվածների և «Տեղական
ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16
հոդվածի 18-19 կետերի պահանջով

Ավագանին

Ո Ր Ո Շ Ե Ց

Հաստատել Նիզամի համայնքի 2015թ-ի տեղական տուրքերը և վճարները
հետևյալ դրույքաչափերով:

1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով
հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝
նոր շենքերի, շինությունների / նեռարյալ ոչ հիմնական/ շինարարության
/տեղադրման/ թույլտվության համար տեղական տուրք սահմանում է
հիմնական օբյեկտների համար՝
ա/ Մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական
բնակելի, այդ թվում՝ այգեգործական / ամառանոցային/ տների, ինչպես նաև
մինչև 200քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և
արտադրական նշանակության օբյեկտների համար -15000/ տասնհինգ հազար/
դրամ:

բ/ Սույն կետի « ա » ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝
բա/ 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող
օբյեկտների համար - 20000 / քսան հազար/ դրամ:

բբ/501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող
օբյեկտների համար- 30000/ երեսունհազար/ դրամ:

բգ/ 1001 և 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների
համար - 50000/ հիսունհազար/ դրամ:

բղ/ 3001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող
օբյեկտների համար - 80000/ ութսունհազար/ դրամ:

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ/ Մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների
համար - 3000 / երեք հազար/ :

դ/ 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների
համար - 5000 / հինգհազար/:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների,
քաղաքաշինական այլ օբյեկտների, վերկառուցման, ուժեղացման,
վերականգնման, արդիականացման աշխատանքների / բացառությամբ
Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝
շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի/ համար, եթե
սահմանված կարգով հաստատված է ճարտարապետաշինարարական
նախաձույժ

ա/ Չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի
գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների / այդ թվում՝
ստորգետնյա/ հետևանքով ընդհանուր օբյեկտի մակերեսի ավելացում կամ
սենքերի գործառական նշանակության փոփոխության համար - 3000 / երեք
հազար/ դրամ:

բ/ Բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ
արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների,
վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների
/ այդ թվում ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի
ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության, ապա,
բացի սույն կետի " ա " ենթակետով սահմանված դրույքաչափի կիրառվում է
նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված
նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի
գործառական նշանակության փոփոխության մասով:

գ/ Նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի
գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների / այդ թվում՝ ստորգետնյա/
շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության,
ապա, սույն օրենքի իմաստով, այն սահմանվում է նոր շինարարություն, որի
նկատմամբ կիրառվում է նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին
կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների,
քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար
տեղական տուրք սահմանվում է 3000 / երեք հազար/ դրամ:

1.2.3 կետերի սահմանված գործակցի կիռարմամբ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1/ Ոգելից և ավկոհուլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար 10000/ տաս հազար/ դրամ:

2/ Օխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար 10000/ տաս հազար/ դրամ:

5. Համայնքի տարածքում՝

ա/ Բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 300 /երեքհարյուր/ դրամ մեկ քառակուսի մետրի համար:

բ/ Հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և /կամ/ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 200.0 / երկուհարյուրհազար /դրամ

գ/ Խանութներում, կրպակներում, տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել -30000 / երեսուն հազար/ դրամ

գա/ Համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանել՝

Հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում - 6000 / վեց հազար/ դրամ

Ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում - 1000/ հազար/ դրամ:

6. Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, Բաղնիքները / սաունաները/, խաղատները ժամը 24 -ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

ա/ Առևտրի օբյեկտների համար 50,0/ հիսունհազար/ դրամ:

բ/ Հանրային սննդի և զվարճանքների օբյեկտների համար 50,0/ հիսուն հազար/ դրամ:

գ/ Բաղնիքների / սաունաների/ համար 200,0/ երկուհարյուրհազար/ դրամ:

7. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար
արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի
տեղական տուրք սահմանել

ա/ ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս
արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար - 1000/ հազար/ դրամ:
բ/ Թունդ ալկոհոլային / սպիրտի պարունակությունը 20և ավելի ծավալային
տոկոս/ արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար -2500 դրամ:
գ/այլ արտաքին գովազդի համար - 500 / հինգհարյուր/ դրամ:

դ/ դատարկ գովազդի վահանակի համար -700/ յոթհարյուր/ դրամ:
8. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ
տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար
սահմանվում է 1000 /հազար/ դրամ:

9. Համայնքի տարածքում մարդատար տաքսու / բացառությամբ երթուղային
տաքսիների/ ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական
տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 5000/ հինգհազար/ դրամ

10/ Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը
փոփոխող վերակառուցման աշխատանքները կատարելու հետ կապված
տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտած
շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ համայնքի
մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել -
5000/ հինգհազար/ դրամ:

11/ Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը
հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում,
անհրաժեշտ չափազրման և այլ նման աշխատանքների համար, համայնքի
մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել -
1000 / հազար / դրամ:

12.Տեղական ինքնակառավարման մարմնի կողմից մրցույթներ և աճուրդներ
կազմակերպելու համար՝ մասնակիցների վճար - 1000 / հազար/դրամ:

13. Աղբահանության համար սահմանել դրույքաչափ ամսեկան մեկ անձի
համար 15 դրամ/տասնհինգ/ դրամ:

Ավագանու անդամներ

Կոչ 5
Կոչ 5
Կոչ 5

Վ. Դունոյան
Ա. Մարգարյան
Տ. Բաբայան

Համայնքի ղեկավար

[Signature] Կարապետյան

